



ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ 09-ՈՍՏՈՍ

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՏԱԲԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես յէջ 176)

արամէական լեզուն, այլ նա եւ իրակայ* մէջ մուտ գործելով խափաներ էր տեղւոյն հին բնիկ ասորաբարբելական լեզուն: Փոքր Ասիոյ մէջ, ինչպէս կ'ապացուցուի գրամներէն, պարսիկ նախարարը պաշտօնական լեզուի կարգը դասեր էին զայն: Սակայն տեղացի հայկական աւանդութիւնն այս մասին ազդեցութիւն

ՅԵՏ զօրաւոր ազդեցութեան, զոր հայ ղեցաբանութեան վերայ ըրեր է իրանի մտաւոր զարգացումն, հարկ է ի նկատի առնուլ նա եւ զլիւսաւորապէս ասորական ազդեցութիւնը: Պարսկական շրջանին մէջ, ոչ միայն յաշխարհին Ասորւոց եւ ի վերին Միջագետս գործածական էր

* Ոմանք համարեցան թէ իրակ ուրիշ բան չէ՛րայց իրան ամուսն, այդ ձեւը առած Արարացեաց ըրանք. (հմտ. Nouv. Journ. Asiat. 3^e série, XI. 1841, p. 658). սակայն սխալ է այդ կարծիքը: Աշխարհագիրը ընդհամրապէս կը միարմին յայտ, թէ իրակ ամուսն կը տրուէր յԱրարացեաց այն կողմիւրն կամ Մահանգներուն, որոնք կը գտնուին Պարսկական ծոցոյն հիւսիսային եւ հիւսիս-արեւմտեան կողմը: Այդ մահանգներէն միմ, որ կը գտնուի Եփրատ եւ Տիգրիս գետոց ըստորին հոսանքին մէջտեղ, եւ կը կոչուի Մերկայապէս արաբական իրակ (Irak al-Arabi), կը համապատասխանէ հին աշխարհին Բաբելոնացոց եւ